

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի Ներքին աուդիտի բաժնի կողմից 2015թ. ընթացքում կատարված աշխատանքների մասին

2015թ. տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է 91 աուդիտ, որից 3 քաղաքային համայնքներում, մարզային ենթակայության «Լոռի- Փամբակի երկրագիտական թանգարան» և 49 կրթական ՊՈԱԿ-ներում /ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական բնույթի տեղեկություններում և հաշվապահական հաշվառման գրանցումներում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում/ և առողջապահական 31 ընկերություններում /«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման օրինականություն/ և ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվառման անձանակազմի կառավարման և գյուղատնտեսության, բաժիններում, ինչպես նաև 4 ՍՍՏԳ-ներում/ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանն առնչվող գործառույթներ/:

Հրավիրվել է մարզպետարանի Ներքին աուդիտի կոմիտեի վեց նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա խախտում թույլ տված մի շարք ՊՈԱԿ-ների տնօրեններ ենթարկվել են կարգապահական տույժերի՝ մեկն ազատվել է աշխատանքից, 4-ը՝ ստացել են «նկատողություն»:  
Արձանագրվել են տարաբնույթ խախտումներ, որոնց մի մասը ենթակա են վերականգնման կամ վերաձևակերպման, ինչպես նաև պետական բյուջե վերադարձման: Մասցածր օրենսդրության պահանջների, հատկապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի, խախտումներ են:

Մարզպետի կողմից գրություններ են հասցեագրվել աուդիտի ենթարկված համայնքների ղեկավարներին և կազմակերպությունների տնօրեններին: Կատարված աուդիտի հիման վրա Վանաձոր քաղաքի և Լոռու մարզի բոլոր տարածաշրջանների մարզային ենթակայության կրթական հաստատությունների ղեկավարների և հաշվապահների մասնակցությամբ կազմակերպվել են խորհրդակցություններ, որոնց ընթացքում բացահայտվել են թերություններ, տրվել են համապատասխան հանձնարարականներ և հսկողություն սահմանվել ՊՈԱԿ-ների կողմից ձեռնարկվող միջոցառումների նկատմամբ: Ներքին աուդիտի բաժնի կողմից պարբերաբար ցուցաբերվել է մեթոդական օգնություն, իսկ արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթեր: Վերականգնման ենթակա գումարը հիմնականում վերականգնվել են:

*Քանի որ անցած տարիների աուդիտի գործունեությունը փաստել է, որ 2013թ. համեմատ 2015թ. պարկերը կտրուկ փոխվել է, նախկին խախտումները և թերությունները գրեթե չեն կրկնվում, ինչը հնարավորություն է տալիս աուդիտի ուսումնասիրման շրջանակներն ավելի ընդլայնել, նրանում ներառելով այնպիսի գործառույթներ, որոնք մարզի կազմակերպություններին առաջադրում են վերադասարուզող կառույցներ:*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Լ.ԲԵՐՈՅԱՆ